ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

---

N o 1799-Ա/2 **«04» հոկտեմբերի, 2022 թ.**

## «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2022» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով», հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 26-ի N 1535-Ա/2 հրամանով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2022 թվականի հոկտեմբերի 9-ի նիստի N 2 արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել մրցութային կարգով ընտրված գիտական թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին՝

– ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ հայտատուներին սահմանված կարգով իրազեկումը,

– կազմակերպել համապատասխան պայմանագրերի կնքումը,

– ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2022 թվականի հոկտեմբեր ամսից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

**ԱՐԱՅԻԿ ԽԱՄԱԼՅԱՆ**
(պարտականությունները կատարող)

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2022 թ. հոկտեմբերի 04 -ի
N 1799 -Ա/2 հրամանի

# ՑԱՆԿ
# ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2022» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ

| | Բնագավառ | Ծածկագիր | Ղեկավարի ազգանուն անուն | Թեմայի վերնագիր | Կազմակերպություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | Կենսաբանական գիտություններ | 22YR-1F027* | Ասատրյան Վարդան Լևոնի | Սևանի իշխանի բնական վերարտադրությունը ապահովելու ձվադրավայրերի ներուժի գնահատում ջրաէկոլոգիական նոր մեթոդաբանությամբ | ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ |
| 2 | Տնտեսագիտություն և գործարարություն | 22YR-5B032 | Ավետյան Արման Ալեքսանդրի | ՀՀ համայնքային ծառայողների կոմպետենցիաների գնահատման մեթոդաբանության մշակում | Հայ-ռուսական համալսարան ԲՄԿ ՊՈՒՀ |
| 3 | Տնտեսագիտություն և գործարարություն | 22YR-5B009 | Գալստյան Անի Համլետի | ՀՀ դրամի փոխարժեքի կարգավորման մեխանիզմների ընտրությունը նոր իրողությունների պայմաններում | Հայ-ռուսական համալսարան ԲՄԿ ՊՈՒՀ |
| 4 | Կենսաբանական գիտություններ | 22YR-1F003 | Դարբինյան Լիլիթ Վահանի | Կուրկումինի, Լևոթիրօքսինի և Բակլոֆենի ազդեցությունների գնահատումը թիրեոիդէկտոմիայից հետո և Ալցհեյմերի հիվանդության ժամանակ | ՀՀ ԳԱԱ «Լ.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ» ՊՈԱԿ |
| 5 | Պատմություն, հնագիտություն | 22YR-6A016 | Երանյան Գոռ Հովհաննեսի | Միջնադարյան Հայաստանի Միափոր գավառի պատմության վերակազմություն XIV-XVIII դդ. (պատմություն, ժողովրդագրություն, տնտեսություն, մշակույթ) | «Մատենադարան» Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամ |
| 6 | Պատմություն, հնագիտություն | 22YR-6A033 | Խաչատրյան Շուշան Ռաֆայելի | ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ, ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ, ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ՄԻՋԳԻՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ) | «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ |
| 7 | Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ | 22YR-1E011 | Ծատուրյան Ավետիս Հովհաննեսի | Ֆտորի քանակի որոշում ՀՀ կենցաղային ջրերում և համեմատական վերլուծություն | «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ |
| 8 | Իրավունք | 22YR-5E012 | Հակոբյան Անուշ Վահանի | Ցատրոգենիան ժամանակակից բժշկության մեջ. քրեաիրավական ասպեկտ | Հայ-ռուսական համալսարան ԲՄԿ ՊՈՒՀ |
| 9 | Աստվածաբանություն, կրոնագիտություն | 22YR-6D018* | Հակոբյան Հայկ Երջանիկի | Հայոց նոր և նորագույն վկաները. սրբադասման նոր առիթ | ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ |
| 10 | Իրավունք | 22YR-5E006 | Հարությունյան Արմեն Ռուբիկի | Քաղաքական իրավունքների դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելման և քրեական վարույթի վրա քաղաքական իշխանության ազդեցության հիմնախնդիրները: | Հայ-ռուսական համալսարան ԲՄԿ ՊՈՒՀ |
| 11 | Կենսատեխնոլոգիա | 22YR-2I015 | Հարությունյան Բաղիշ Աշոտի | Ցիանոբակտերիաներից և միկրոջրիմուռներից գլիկոգլիցերոլիպիդների անջատում և հակաբաղցկեղային ազդեցության ուսումնասիրություն | ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 12 | Տնտեսագիտություն և գործարարություն | 22YR-5B031 | Հարությունյան Գևորգ Արամի | Գյուղատնտեսության և գյուղական տարածքների թվայնացման ժամանակակից լուծումները. արտասահմանյան փորձը և ներդրման հնարավորությունները ՀՀ-ում | ՀՀ ԳԱԱ «Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ |
| 13 | Արվեստագիտություն | 22YR-6E004 | Հարությունյան Մարտին Վարդանի | Երևանի այգիների դիզայնի ու կոմպոզիցիոն խնդիրների բարելավման հնարավորությունները | ՀՀ ԳԱԱ «Արվեստի ինստիտուտ» ՊՈԱԿ |
| 14 | Ֆիզիկա և աստղագիտություն | 22YR-1C013 | Հովհաննիսյան Բաբկեն Արթուրի | Կենսաազդանշանների հետազոտումը վիճակագրական վերլուծության մեթոդների կիրառմամբ | «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ |
| 15 | Կենսաբանական գիտություններ | 22YR-1F029 | Հովհաննիսյան Մարգարիտա Ռոբերտի | Գլյուկոզի մակարդակի և որոշ ֆերմենտների ակտիվությունների սեռային ու տարիքային տարբերությունները 1-ին տիպի շաքարային դիաբետով հիվանդների արյան պլազմայում | ՀՀ ԳԱԱ «Հ.Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ |
| 16 | Պատմություն, հնագիտություն | 22YR-6A017 | Ղանալանյան Տիգրան Հայկի | Արտագաղթը Խորհրդային Հայաստանից (1950-ական թթ. մինչև 1991 թ.) | «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ |
| 17 | Կենսաբանական գիտություններ | 22YR-1F041 | Մամյան Արմինե Սուրենի | Ջրիմուռներիի կուլտուրաների հավաքածույի ստեղծում | ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ |
| 18 | Լեզվագիտություն, գրականագիտություն | 22YR-6B030 | Մատիկյան Հասմիկ Համլետի | Շիրակի մանկական բանահյուսությունը | ՀՀ ԳԱԱ «Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ |
| 19 | Պատմություն, հնագիտություն | 22YR-6A025 | Մարգարյան Գոռ Արարատի | Կենսամակարդակի փոփոխությունները Արևելյան Հայաստանում (XVI դ. - XX դարի սկիզբ) | ՀՀ ԳԱԱ «Արևելագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ |
| 20 | Քաղաքական գիտություններ | 22YR-5F043 | Մելքոնյան Սերգեյ Գեորգիի | «Հարավկովկասյան հանգույց». Թուրքիա-Իսրայել-Ադրբեջանի գործակցությունը Մեծ Մերձավոր Արևելքում | Հայ-ռուսական համալսարան ԲՄԿ ՊՈՒՀ |
| 21 | Պատմություն, հնագիտություն | 22YR-6A042 | Միրզոյան Էլինա Զորիկի | Թուրք կանանց մասնակցությունը Հայոց ցեղասպանության գործընթացին. Կարմիր մահիկի կանանց կենտրոնը | «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ |
| 22 | Կլինիկական բժշկություն | 22YR-3B014 | Մկրտչյան Սիրանուշ Աշոտի | Պանդեմիայի պայմաններում երեխաների և դեռահասանների հարկադիր ինքնամեկուսացման և հեռավար ուսուցման հոգեբանական հետևանքների խնդիրները : երեխաները կբացահայտեն իրենց գաղտնիքը՝ կորոնավիրուսային երկընտրանք և ԼՕՌ պաթոլոգիայի սիմպտոմների առանձնահատկություններ | «Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ |
| 23 | Տնտեսագիտություն և գործարարություն | 22YR-5B036 | Մնացականյան Լիդա Արմենի | Արտերկրից ներհոսող կապիտալի և աշխատուժի արդյունավետ կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում՝ արդի աշխարհաքաղաքական պայմաններում | Հայ-ռուսական համալսարան ԲՄԿ ՊՈՒՀ |
| 24 | Պատմություն, հնագիտություն | 22YR-6A010 | Մուրադյան Հայկուհի Մանվելի | Համայնքը և հանրային մշակութային տարածքի փոխակերպումները հետխորհրդային Հայաստանում սահմանամերձ բնակավայրերի օրինակով | «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ |
| 25 | Պատմություն, հնագիտություն | 22YR-6A037 | Ներսիսյան Սոնա Արայիկի | Այլազգի ներգաղթյալների սոցիալական ինտեգրման փորձառությունը Հայաստանում. իրավիճակ և զարգացումներ | ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ |
| 26 | Մեքենագիտություն և մեքենաշինություն | 22YR-2D040 | Չիբուխչյան Հովհաննես Սուրենի | Ուլտրաձայնային տատանումների մագնիսաառաձգական կերպափոխիչների կիրառմամբ կոյուղու խողովակաշարերի մաքրման գործընթացի արդյունավետության և արտադրողականության բարձրացումը | «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ |
| 27 | Պատմություն, հնագիտություն | 22YR-6A024 | Պետրոսյան Լիանա Ռուբենի | Ադրբեջանական Հանրապետության քրդերը և «Կարմիր Քրդստանի» խնդիրը Արցախյան երկրորդ պատերազմից հետո իրողությունների համատեքստում | «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 28 | Քիմիա | 22YR-1D023 | Պետրոսյան Հայկ Ռազմիկի | Վայրի աճող բուսատեսակների ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրում, կենսաակտիվ միացությունների անջատում և արտադրական տարբեր բնագավառներում կիրառման հնարավորության ուսումնասիրում | «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ |
| 29 | Լեզվագիտություն, գրականագիտություն | 22YR-6B008* | Պողոսյան Նաիրա Հակոբի | Թուրք գրող Նեջիփ Ֆազըլ Քըսաքյուրեքը որպես «նոր (Էրդողանական) Թուրքիայի» գաղափարախոս. իսլամական պահպանողականության էվոլյուցիան՝ գրական ստեղծագործություններից մինչև քաղաքական ինքնություն | «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ |
| 30 | Լեզվագիտություն, գրականագիտություն | 22YR-6B005 | Սարգսյան Մերի Արթուրի | Հայերենի արդի լեզվավիճակի քննություն ռուսական միջավայրում (հայերենը որպես սփյուռքի լեզու և օտար լեզու) | ՀՀ ԳԱԱ «Գիտակրթական միջազգային կենտրոն» հիմնարկ |
| 31 | Լեզվագիտություն, գրականագիտություն | 22YR-6B039 | Սարգսյան Նառա Ղարիբի | Լևոն Շանթի պատմական դրամաները և 19-րդ դարի 70-90-ական թվականների եվրոպական դրամատուրգիան | ՀՀ ԳԱԱ «Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ» ՊՈԱԿ |
| 32 | Արվեստագիտություն | 22YR-6E002 | Սիմոնյան Արփինե Արմենի | Հայերեն ձեռագրերի պատառիկ-պահպանակները՝ որպես հայկական մանրանկարչության ուսումնասիրման հիմք | «Մատենադարան» Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամ |
| 33 | Լեզվագիտություն, գրականագիտություն | 22YR-6B026 | Սողոյան Աստղիկ Վալերիանի | Իտալական կլասիցիզմի և ռոմանտիզմի ազդեցությունը Վենետիկի Մխիթարյանների ստեղծագործությունների և գրքարվեստի վրա (18-19-րդ դարեր) | ՀՀ ԳԱԱ «Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ» ՊՈԱԿ |
| 34 | Քիմիա | 22YR-1D007 | Ստեփանյան Լալա Աշոտի | Պոտենցիալ կենսաբանորեն ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուների, պեպտիդների նպատակային սինթեզ ու դրանց կենսաակտիվության հետազոտում | ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ |
| 35 | Կենսատեխնոլոգիա | 22YR-2I038* | Վարդանյան Արևիկ Կարենի | Առաջնային հումքից գունավոր մետաղների կորզման բարձր արդյունավետության կենսատեխնոլոգիա | ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ |
| 36 | Էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ | 22YR-2B001 | Վարդանյան Արման Արամի | Ուղղահայաց անցումով արևային էլեմենտների հիման վրա ֆոտովոլտային փոխակերպիչների մշակումը | «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ |
| 37 | Պատմություն, հնագիտություն | 22YR-6A021 | Վարդանյան Բենիկ Վարդանի | Կուրարաքսյան միջագետքի ուշբրոնզեդարյան հնահասարակություններում առանձնաշնորհության հնագիտական և հնամարդաբանական դրսևորումները | Հայաստանի պատմության թանգարան |

* 22YR-6B008; 22YR-6D018; 22YR-1F027; 22YR-2I038 հայտերի ֆինանսավորումը կքննարկվի «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր» մրցույթն ամփոփելուց հետո